ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

«17» 12 2012 թ. N 173-Ա

# ՀՐԱՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 185-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 12-րդ կետի <<դ>> և <<թ>> ենթակետերի պահանջներով.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները՝ համաձայն 1-9-ը հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 3-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին>> N 185-Ա հրամանը:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ